Հաստատում եմ
Տնօրեն
<<[illegible]>> սեպտեմբերի 2022թ.

**Քասախի Ա.Հովհաննիսյանի անվան № 2 միջնակարգ դպրոց**

# Դասղեկի տարեկան թեմատիկ պլանավորում

**12-րդ դասարան**




**Շաբաթական 1 ժամ՝ ընդհանուր 15 ժամ**

**Դասղեկ՝ Տ.Մարդանյան**

Հաշվի առնելով և' ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և' տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և' դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ ,,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից, ,,Մտքի իրավառություն ,, գրքից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք: Իսկ այդպիսի փոփոխություններն ու նորարարությունները կարտացոլվեն դասղեկի իմ օրվա պլանում:

| Դասի համարը | Դասի թեման | Կատարող անձ | Տեսակ |
|---|---|---|---|
| 1 | Կազմակերպչական հարցեր | Դասղեկ, աշակերտներ | Զրույց |
| 2 | ՌԻսուցիչ:Ո՞վ է նա: | Դասղեկ,ուսուցիչ աշակերտներ, | Զրույց |
| 3 | Իմ իրավունքներն ու պարտականությունները: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց |
| 4 | Ինչպես կյանքում հաջողության հասնել: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց |
| 5 | Ի՞նչ եմ ուզում դառնալ: Մասնագիտական կողմնորոշում: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց, բանավեճ |
| 6 | Ի՞նչ է հայրենասիրությունը: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց |
| 7 | Ի՞նչով կարելի է հպարտանալ խոսելով հայաստանի մասին: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց |
| 8 | Ընկերության և ընկերասիրության մասին: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց, բանավեճ |
| 9 | Պատասխանատվությունն և անպատաս-խանատվությունը:Ի՞նչ է թաքնված այս բառերի հետևում: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց, բանավեճ |
| 10 | Ծնողներս ինձ համար,ես՝ ծնողներիս: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց |
| 11 | Տակտի զգացողությունը հասուն լինելու նշա՞ն է: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | Ինչպե՞ս եմ պատկերացնում ինձ դպրոցն ավարտելուց 10 տարի անց: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց |
| 13 | Արցախյանհերոսամարտիկները: Եռաբլուր պանթեոնը: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց |
| 14 | Կարողանալ համապատասխանել մարդ կոչմանը | Դասղեկ, աշակերտներ | Զրույց, բանավեճ |
| 15 | Ինչ տվեց դպրոցն ինձ 12 տարիների ընթացքում: | Դասղեկ, աշակերտներ | Զրույց |

Նախատեսում եմ նաև ,,Բաց դաս/եր/,,,որի/որոնց/թեմայի ընտրությունը կկատարեն երեխաները՝ ընտրելով իրենց ավելի հոգեհարազատ թեման: